

Յոպպէի հռչակաւոր նաւահանգիստը բնական կանթ մ'է դէպի հիւսիս բացուած, երեք հարիւր մէթր երկայնութեամբ և հարիւր մէթր լայնութեամբ. կանթը կազմուած է ժայռերու շերտով մը՝ հազիւ մին միւսէն հինգ մէթր հեռի՝ երկու յառաջակարկառ ժայռերու մէջ սեղմուած արևմտեան կողմի անցքով միասին, ուր ալիքներ «ելանն լեռնանան և իջանն դաշտանան» Սաղմոսերգուելն ըսածին նման (Սղմ. ճԳ. 8): Այս այն մուտքն է՝ ուրկէ սովորաբար կ'անցնին, ոչ անվտանգ, բացերը կեցող նաւերէ ուխտաւորներ բերող նաւակները. քիչ մը աւելի մեծ տարողութեամբ նաւերը մուտք կը գործեն հիւսիսէն: Այս աւազանը անտարակոյս բաւական ընդարձակ և խոր էր պարունակելու համար հին տտենուան փոքր նաւերը. բայց մեծագոյն նաւերը և արդի չոգենաւերը հեռուն պարտաւոր են խորըսել. այսօր ան կիսով մը աւազով լեցուած է, հոն կ'ապաստանին միայն սովորական նաւակները և քիչ տարողութեամբ առագաստանաւերը:

Յոպպէն՝ Հրէաստանի և Սամարիոյ հեռաւոր լեռներու մանիշակագոյն կապոյտի վրայ իր ձերմակ տուներով պաղեստինեան ափանց գորշ դեղին բլուրի մը վրայ բարձրանալով՝ և յառաջանալով դէպի ծով, հեռուէն սկող ուղեորին կը ներկայանայ նման բարեկամի մը՝ որ իր ձեռքը կ'երկարէ ընդունելու զայն այս ցանկալի Աւետեայ երկրին մէջ: Այն փառքը որուն արժանի էր Եսաֆնի անունը, իր մրգաստաններուն փառքն է: Փարաւոնի ա'յն զօրապետը որ մեզ թողած է Ուղեորութեան հընադոյն պատմութիւնը, և Ռամսէս Բ. Մէնէֆթահի ժամանակ Պաղեստինէն կ'անցնէր, արդէն կը փառաբանէ իրենց բարգաւաճման մէջ գտնուող Յոպպէի կանաչադարգ ցանկապատերը, և հրապուրուած է անոնց հասունցած և հիւթեղ պտուղներով: Քաղաքին վերէն աչքը կ'ընդգրկէ ընդարձակ տարածութիւն մը՝ զոր աւելի նպաստաւորեալ բնակիչներուն ճարտարարուեստը տակաւին պիտի կրնայ զարգացնել կազմելով միակ անտառակ մը, այսինքն թաւուտք մը թղենիներու, նշենիներու, ծիրանիի, դեղձի, հսկայական ժանտաթղենիներու, թթենիներու, կիտրոնի ծառերով բեռնաւորեալ իրենց բոյրը հեռուն տարածող ծաղիկներով և պտուղներով. նարնջենիներու՝ որոնց ճիւղերը կը հակին իրենց ոսկեգոյն խոշոր պտուղներու ծանրութեան